

# Ընտրողների իրավունքների նախագիծը



## ★ դուք ունեք հետևյալ իրավունքները ★

- Քվեարկելու իրավունք, եթե դուք գրանցված ընտրող եք:** Դուք քվեարկելու իրավունք ունեք, եթե
  - ★ Կալիֆոռնիայում ապրող ԱՄՆ քաղաքացի եք
  - ★ առնվազն 18 տարեկան եք
  - ★ գրանցված եք այնտեղ, որտեղ ներկայումս ապրում եք
  - ★ ներկայումս քրեական հանցանքի համար նահանգային կամ ֆեդերալ մակարդակով դատապարտված չեք ազատազրկման և
  - ★ ներկայումս դատարանի կողմից քվեարկման համար ճանաչված չեք անգործունակ
- Քվեի իրավունքը, եթե դուք գրանցված ընտրող եք, նույնիսկ եթե Ձեր անունը չկա ցուցակում:**  
Դուք քվեարկելու եք պայմանական քվեաթերթիկով: Ձեր քվեն հաշվի կառնվի, եթե ընտրական հանձնաժողովի անդամները որոշեն, որ Դուք քվեարկելու իրավունք ունեք:
- Քվեի իրավունքը, եթե ընտրատեղամասերը փակվելիս Դուք դեռ հերթի մեջ եք:**
- Գաղտնի քվեարկության իրավունք`** առանց Ձեզ որևէ մեկի անհանգստացնելու կամ ասելու, թե ինչպես քվեարկեք:
- Նոր քվեաթերթիկ ստանալու իրավունքը,** եթե Դուք, դեռևս չքվեարկած, սխալ եք թույլ տվել: Դուք կարող եք` **Ընտրատեղամասում ընտրական հանձնաժողովի անդամին խնդրել`** ստանալու նոր քվեաթերթիկ **Փոխարինեք Ձեր հեռակա քվեարկման քվեաթերթիկը** նորով ընտրական բյուրոյում կամ Ձեր ընտրատեղամասում կամ **Քվեարկեք պայմանական քվեաթերթիկով:**
- Քվեարկության ժամանակ** ցանկացածից օգնություն ստանալու իրավունքը` բացառությամբ ձեր գործատուի կամ արհմիության ներկայացուցչի:
- Կալիֆոռնիայի ցանկացած ընտրական տեղամասում հեռակա քվեարկման Ձեր լրացրած քվեաթերթիկից հրաժարվելու իրավունքը:
- Այլ լեզվով ընտրական նյութեր ստանալու իրավունքը,** եթե Ձեր քվեարկության տեղամասում շատերը խոսում են այդ լեզվով:
- Ընտրական հանձնաժողովի անդամներին ընտրությունների ընթացակարգերի վերաբերյալ հարցեր ուղղելու** և ընտրությունների ընթացքը դիտելու իրավունքը: Եթե այն անձը, ում դուք հարց եք ուղղել, չի կարող պատասխանել Ձեր հարցին, նա պետք է Ձեզ ուղարկի այն անձի մոտ, ով կարող է պատասխանել Ձեր հարցին: Ձեր կողմից ճշշում գործադրելու դեպքում նրանք կարող են Ձեզ չպատասխանել:
- Ցանկացած անօրինական կամ կեղծ ընտրական գործունեության վերաբերյալ զեկուցելու իրավունքը** ընտրական հանձնաժողովի անդամին կամ նահանգային բյուրոյի քարտուղարին:

### ՀԱՏՈՒԿ ԾԱՆՈՒՑՈՒՄ

- Ընտրատեղամասերը բաց են առավոտյան 7:00-ից մինչև երեկոյան 08:00-ն ընտրական օկրուզի ընտրողների տեղեկատվական ուղեցույցում նշված օրը:
- Քվեարկության կարգի վերաբերյալ հատուկ հրահանգները` ներառյալ պայմանական քվեաթերթիկով քվեարկություն կատարելու ձևը, կարելի է ստանալ տեղամասի ընտրական հանձնաժողովի անդամից կամ կարդալով Ձեր տեղական ընտրական հանձնաժողովի անդամի կողմից Ձեզ ուղարկված տեղեկությունները:
- Եթե Դուք նոր գրանցված ընտրող եք, հնարավոր է պահանջվի ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ կամ այլ փաստաթուղթ` համաձայն ֆեդերալ օրենքի: Բայց խնդրում ենք նկատի ունենալ, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի քվեարկություն կատարել պայմանական քվեաթերթիկով նույնիսկ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում:
- Անօրինական է ներկայանալ որպես քվեարկելու իրավունք ունեցող, քանի դեռ չեք բավարարել դաշնային և նահանգային օրենսդրությամբ նախատեսված քվեարկության բոլոր պահանջները:
- Քվեարկության սարքավորման հետ կապված խարդախություն անելը անօրինական արարք է:

**Եթե կարծում եք, որ նշված որևէ իրավունք ոտնահարվել է,** զանգահարեք նահանգային ընտրողների հարցերով քարտուղարի գաղտնի անվճար թեժ գիծ (800) 345-VOTE (8683) հեռախոսահամարով:

 [www.sos.ca.gov](http://www.sos.ca.gov) կայքում

 **(800) 345-VOTE (8683)** հեռախոսահամարով

 [elections@sos.ca.gov](mailto:elections@sos.ca.gov) էլ փոստով